



Ք. Երևան

07 փետրվարի 2012թ.
Ճ.11⁰⁰

ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2011թ. մարդահամարի նախնական օպերատիվ ցուցանիշների մասին

Ամփոփվել են ՀՀ 2011թ. մարդահամարի նախնական օպերատիվ ցուցանիշները (ըստ ամփոփաթերթերի հանրագումարների):

Ամփոփվել են ՀՀ 2011թ. մարդահամարի նպատակով ձևավորված 11548 հաշվային տեղամասերի ամփոփ տեղեկագրերի հիման վրա՝ 2243 հրահանգչական տեղամասերի, դրանց հիման վրա 182 մարդահամարի տեղամասերի, իսկ վերջիններիս հիման վրա ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) Երևանի քաղաքային և 10 մարզային գործակալությունների կողմից կազմված ամփոփ տեղեկագրերով մարդահամարի ընթացքում **հաշվեգրված բնակչության թվաքանակի** վերաբերյալ տեղեկությունները:

Վերոհիշյալ ամփոփագրերում արտացոլված տվյալների հանրագումարներին ավելացվել են ՀՀ արտաքին գործերի, ՀՀ արդարադատության, ՀՀ պաշտպանության նախարարությունների, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության և ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից հատուկ կարգով հաշվառված անձանց վերաբերյալ ամփոփ տվյալները:

ՀՀ 2011թ. մարդահամարի ժամանակ հաշվառման ենթակա են եղել մարդահամարի հաշվառման պահին՝ Հայաստանի տարածքում գտնվող (մշտապես և ժամանակավորապես) բոլոր անձինք (Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք), ինչպես նաև ՀՀ-ում մշտապես (սովորաբար) բնակվող, բայց մարդահամարի հաշվառման պահին (հոկտեմբերի 12-ի⁰⁰ ժամի դրությամբ) հանրապետությունից բացակայողները (անկախ բացակայության ժամկետից):

ՀՀ ԱՎԾ Երևանի քաղաքային և 10 մարզային գործակալությունների ամփոփ տեղեկագրերում արտացոլված ցուցանիշները ենթարկվել են ընտրանքային ստուգման՝ ընդհուպ մինչև հաշվային տեղամասերի ամփոփագրերը: Ընտրանքի չափը կազմել էր հաշվային տեղամասերի մոտ 10 տոկոսը:



ՀՀ ԱՎԾ մարդահամարի վարչության կողմից իրականացված ստուգման արդյունքում բացահայտվել են պարզ թվաբանական անճշտություններ և բացթողումներ (թվաբանական գործողության սխալ, հաջորդող ամփոփագրերի ընդհանուր թվաքանակի հանրագումարում՝ հաշվային տեղամասի ամփոփագրերից երբեմն միայն տղամարդկանց թվաքանակի ցուցանիշի սյունակի հանրագումարի օգտագործում, կամ հաշվարարի կողմից 1 կամ 2 հարցաթերթերի տվյալների բաց թողում՝ դրանց չարտացոլում ամփոփաթերթերում և այլն): Բացահայտված սխալների տեսակարար կշիռը հանրագումարի նկատմամբ կազմել է 0.12 տոկոս: Ընդ որում, ստուգման խորությունը սահմանափակվել է վերոհիշյալով, քանզի հարցաթերթերի տրամաբանական ստուգումն իրականացվելու է համակարգչային հատուկ ծրագրի (CSPRO) միջոցով, տվյալների մուտքագրումից հետո:

Վերոհիշյալ ամփոփագրերում արտացոլված տվյալների և հատուկ կարգով հաշվառված անձանց վերաբերյալ ամփոփ տվյալների հանրագումարի արդյունքում ստացվեց.*

ՀՀ 2011թ. մարդահամարի ժամանակ (հոկտեմբերի 12-ի⁰⁰ ժամի դրությամբ) **հաշվեգրված բնակչության նախնական օպերատիվ ցուցանիշը**¹ կազմել է **3, 285, 767**** մարդ:

Ամփոփման արդյունքում հնարավոր է եղել ստանալ նաև **առկա բնակչության** թվաքանակի վերաբերյալ նախնական տվյալներ:

Առկա բնակչության թվաքանակը² ստացվել է մարդահամարի ժամանակ՝ 2011թ. հոկտեմբերի 12-ի⁰⁰ ժամի դրությամբ հաշվեգրված անձանց ընդհանուր թվաքանակից հանելով բացակայող անձանց թվաքանակը:

Առկա բնակչության նախնական օպերատիվ ցուցանիշը կազմել է **2,871,509***** մարդ:

Մշտական բնակչության թվաքանակը³ կստացվի բոլոր հարցաթերթերի կողավորման, մուտքագրման և ծրագրային մշակման արդյունքում, ինչը նախատեսվում է ավարտել 2012թ. հոկտեմբերին:

* Ցուցանիշների սահմանումները ներկայացված են կից հավելվածում՝ ըստ համապատասխան համարակալումների:

** ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքներով, հոկտեմբերի 10-ի⁰⁰ ժամի դրությամբ այդ ցուցանիշը կազմել էր 3, 458, 303 մարդ:

*** ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքներով, հոկտեմբերի 10-ի⁰⁰ ժամի դրությամբ այդ ցուցանիշը կազմել էր 3, 002, 598 մարդ:

Ցուցանիշների սահմանումները

1. **Հաշվեգրված բնակչության ցուցանիշը՝** մարդահամարի ընթացքում հաշվարարի կողմից բնակչության հարցման եղանակով մարդահամարի հարցաթերթում լրացված բոլոր անձանց թվաքանակն է (ներառյալ՝ ինչպես ներկա, այնպես էլ բացակա):

2. **Առկա բնակչություն՝** տվյալ տարածքում մշտապես բնակվող ու հաշվառման պահին ներկա և ժամանակավոր ներկա բնակչության թվաքանակի ցուցանիշների հանրագումարը:

Ժամանակավոր ներկա է համարվում մարդահամարի պահին տվյալ տարածքում ոչ ավել քան մեկ տարի ժամկետով գտնվող և մշտապես չբնակվող անձը:

3. **Մշտական բնակչություն՝** տվյալ տարածքում մշտապես բնակվող ու հաշվառման պահին ներկա (առանց ժամանակավոր ներկաների) և ժամանակավոր բացակայող բնակչության թվաքանակի ցուցանիշների հանրագումարը:

Ժամանակավոր բացակա է համարվում՝ մարդահամարի պահին իր հիմնական (մշտական) բնակության վայրից մինչև մեկ տարի ժամկետով բացակա անձը: